ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Անհատական խոհեր ու յուշեր են սրանք, որոնք այս աղէտաւոր պատերազմի ընթացքին — մանաւանդ 1917–1918 թուերին— հոգիս ալեկոծեցին. մեծութեանս տրտում ու խոհուն ժամերին սրտիս ծածուկ զրոյցներն են արիւնոտուած ու մարտնչող Հայրենիքիս հետ. վշտիս ու վիրաւոր յոյսիս հեծեծանքներն են, արդար ցասումիս ու ընդվզումիս մոլեգնութիւնը: Աշխարհից ծածուկ, խաւար գիշերներին՝ որդիական իմ պաշտամունքն է իմ վատաբաղդ Հայրենիքին նրա մօտալուտ ազատութեան կուռ հաւատով, որ ամենասեւ օրերին իսկ՝ կեանքիս յենարանն եղաւ:

Կ'ուզէի, որ մեր ազատ ու անկախ հայրենիքում, երբ մեր օրերի ու մեր սերնդի ցաւագին ու դաժան բաղխումները հին հէքիաթներ դառնան, գալիք սերունդների սրտերում վառ ու անշէջ հնոցի պէս միշտ կենդանի մնայ ամեն մի անարդարութեան, ամեն մի անիրաւութեան, ամեն մի զրկանքի դէմ ըմբոստացումի վսեմ զգացումը: Վասն զի ցաւը յաւիտենական է, ինչպէս եւ պայքարը:

Այս մտածումով է, որ հրատարակութեան եմ յանձնում այս իմ խոհերն ու յուշերը: (1)

---

(1) *ԾԱՆՕԹ.— Մինչեւ IX-րդ գլուխը ժամանակին հրատարակուած է Թիֆլիսի «Հորիզոն» թերթում. մնացած գլուխներն անտիպ են:*